ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ և ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 50-ԱՄՅԱԿԻՆ

Հնագիտության և ազգագրության ինստիտուտն իր գոյության ընթացքում կազմակերպել է բազմաթիվ տեղական և մի քանի միջազգային գիտաժողովներ, որոնցից հատկապես հիշարժան է 1982 թ. Երևանում տեղի ունեցած «Մշակութային առաջընթացը բրոնզի և վաղ երկաթի դարում» գիտաժողովը, որին մասնակցում էին բազմաթիվ հնագետներ խորհրդային տարբեր հանրապետություններից: Դա հնագիտական վերջին միջազգային գիտաժողովն էր Հայաստանում: Այս իմաստով ժամանակի հրամայական պահանջ էր դարձել միջազգային նոր գիտաժողովի հրավիրումը, որը կամփոփեր հայ հնագիտության հատկապես հետխորհրդային ժամանակաշրջանի նվաճումները: Հարմար առիթ հանդիսացավ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի 50-ամյա հոբելյանը: 2009 թ. սեպտեմբերի 15-17-ի ընթացքում հրավիրվեց միջազգային գիտաժողով՝ «Հայաստանի հնագիտությունը տարածաշրջանային համատեքստում. ձեռքբերումները և հեռանկարները» թեմատիկայով, որն իր ընդգրկմամբ ու բնույթով նախադեպը չուներ: Գիտաժողովին զեկուցումներով հանդես եկան 50 հնագետներ Հայաստանից և արտասահմանից: Հայաստան էին ժամանել 20 հնագետներ 11 երկրներից (Վրաստան, Թուրքիա, Իտալիա, Ֆրանսիա, Ավստրիա, Գերմանիա, Իսպանիա, Իռլանդիա, Անգլիա, ԱՄՆ, Իսրայել): Մի քանի օրվա ընթացքում քննարկվեցին քարի դարից մինչ միջնադար ընկած ժամանակաշրջաններին վերաբերող տարաբնույթ խնդիրներ: Գիտաժողովի հիմնական լեզուն հայերենն էր և անգլերենը:

Գիտաժողովի առաջին օրը (սեպտեմբերի 15) սկսվեց պաշտոնական բացմամբ. ելույթ ունեցան ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ռ. Մարտիրոսյանը, *ՀՀ ԳԱԱ հայագիտական և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար* Վ. Բարխուդարյանը, *ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր* Վ. Հովհաննիսյանը *և ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն* Պ. Ավետիսյանը, *որոնք կարևորեցին հնագիտական ուսումնասիրությունների դերը և ընդգծեցին հնագիտության զարգացման հեռանկարները Հայաստանում:*

*Գիտաժողովի առաջին օրվա զեկուցումները նվիրված էին հնագիտության զարգացման ընդհանուր խնդիրներին, Հայաստանում կատարվող հնագիտական միջազգային նախագծերի հիմնական արդյունքներին: Ընթերցվեցին զեկուցումներ հետևյալ բովանդակությամբ. «Հայաստանը և հնագիտության գլոբալ վերափոխումները XXI դարում» (*Ա. Քալանթարյան, Գ. Արեշյան, Չ. Սթանիշ և Ռ. Բոյթներ՝ *Հայաստան, ԱՄՆ), «Քարի դարի ուսումնասիրության հիմնական արդյունքները Հայաստանում (2001–2009 թթ.)» (*Բ. Գասպարյան՝ *Հայաստան), «Հայ միջնադարյան հնագիտության ձեռքբերումները»* (Ա. Քալանթարյան և Հ. Մելքոնյան՝ *Հայաստան*), *«Հայ-իտալական հնագիտական արշավախմբի աշխա-*

տանքները Սևանի ավազանում (1994–2009 թթ.)» (Լ. Բիշիոնե, Ս. Հմայակյան, Հ. Հակոբյան և Ն. Պարմեջիանի՝ *Հայաստան, Իտալիա*), *«Որոտան» ծրագրի ուսումնասիրությունների հիմնական արդյունքները Սյունիքում (2005–2007 թթ.)»* (Մ. Զարդարյան և Ս. Մելքոնյան՝ *Հայաստան, ԱՄՆ*), *«Կովկասյան օյկումենի հյուսիս-հարավ մշակութային հարաբերությունների խնդիրը բրոնզի և երկաթի դարաշրջաններում»* (Կ. Փիցխելաուրի՝ *Վրաստան*), *«Ազոխի քարայրի 2002–2008 թթ. պեղումների արդյունքները»* (Յ. Ֆերնանդես-Խալվո, Տ. Քինգ, Պ. Անդրյուս, Լ. Եպիսկոպոսյան, Ն. Մոլոնի, Ջ. Մուրի, Պ. Դոմինգես-Ալոնսո, Լ. Ասրյան, Պ. Դիչֆիելդ, Ջ. վան դեր Մեիդ, Տ. Տորես, Պ. Սևիլա, Մ. Նիետո, Ի. Կակերես, Ե. Ալլուե, Դ. Մարին և Տ. Սամց՝ *Հայաստան, Արցախ, Իսպանիա*),

Լեռնաշխարհի բնակեցման սկզբնափուլերի առանձնահատկությունների և օրինաչափությունների ուսումնասիրության հարցերին էր նվիրված տարբեր երկրների հետազոտողների մի մեծ խմբի կատարած աշխատանքներն ընդհանրացնող Ռ. Փինհասիի *երկու զեկուցումները՝ «Հրազդան գետի կիրճի ուսումնասիրության պալեոլիթյան ծրագիրը (2008–2009 թթ.)»* (Դ. Ադլեր, Ռ. Փինհասի, Բ. Երիցյան, Կ. Վիլկինսոն, Գ. Բար-Օզ, Բ. Գասպարյան, Ս. Նահապետյան, Կ. Մալոլ, Ֆ. Բերնա, Ռ. Բեյլի, Ռ. Հովսեփյան, Ս. Բլոքլի, Փաին-Օ դոնել և Բ. Շմիդտ՝ *Հայաստան, ԱՄՆ, Իռլանդիա*), *«Հովք – 1 քարանձավը. մարդու և արջի գործունեության վերաբերյալ տվյալներ լեռնային միջավայրում»* (Ռ. Փինհասի, Բ. Գասպարյան, Կ. Վիլկինսոն, Ս. Նահապետյան, Ռ. Հովսեփյան, Գ. Բար-Օզ, Ռ. Բեյլի, Ա. Բրուխ, Դ. Հոֆման, Դ. Ս. Ադլեր, Ա.Վ. Գ. Փայք և Մ. Ստեֆենս՝ *Հայաստան, Իռլանդիա*)*: Զեկուցմամբ ներկայացվեցին նախամարդու գոյատևման համար անհրաժեշտ կենսատարածքների և կենսառեսուրսների, քարիդարյան հուշարձանների՝ ժամանակակից մեթոդներով ու սարքավորումներով անալիտիկ հետազոտությունների արդյունքները, կարևորեց հայաստանյան հետազոտությունների տեղն ու դերը մարդագոյացման ուսումնասիրության բնագավառում:*

Վաղ երկրագործական-անասնապահական հասարակությունների ձևավորման և տարածման խնդիրներն արծարծվեցին «Էպիպալեոլիթը և խալկոլիթը հյուսիսարևմտյան Հայաստանում. ուսումնասիրության նախնական արդյունքները» (Ք. Շատենյե՝ *Ֆրանսիա*), *«Նեոլիթի հետազոտությունը Արարատյան դաշտում. ֆրանս-հայկական պեղումներն Առատաշենում»* (Պ. Լոմբարդ և Ռ. Բադալյան՝ *Հայաստան, Ֆրանսիա*), *«Արենի – 1. նոր տվյալներ Հայկական լեռնաշխարհի վաղագույն քաղաքակրթությունների վերաբերյալ»* (Գ. Արեշյան, Բ. Գասպարյան, Պ. Ավետիսյան և Ռ. Փինհասի՝ *Հայաստան, ԱՄՆ, Իռլանդիա*), *«Գոդեձորի պեղումների արդյունքները (2005–2008 թթ.)»* (Պ. Ավետիսյան, Ի. Քալանթարյան, Ք. Շատենյե և Ջ. Պալումբի՝ *Հայաստան, Ֆրանսիա*) *զեկուցումներում: Խոսվեց այն մասին, որ տարբեր երկրների և հայ մասնագետների ուժերով կատարվող դաշտային ու անալիտիկ հետազոտություններն առաջին անգամ հնարավորություն են տալիս ձևավորելու Հայաստանի նեոլիթ-էնեոլիթյան մշակույթի ժամանակագրական սանդղակը՝ ներկայացված կոնկրետ հուշարձաններով և շերտերով: Նշվեց, որ ձեռքբերված նորագույն տվյալներ արմատապես փոխում են նախկին պատկերացումները վաղ բրոնզի դարի կուր-արաքսյան մշակութա-*

յին ընդհանրության ձևավորման ելակետային տարածքների, ժամանակագրության վերաբերյալ:

Գիտաժողովի երկրորդ օրը (սեպտեմբերի 16) նվիրված էր Հայաստանի բրոնզ-երկաթիդարյան հնագիտության խնդիրներին: Մասնավորապես, քննարկման առարկա դարձան վաղ բրոնզի կուր-արաքսյան մշակույթի տարածույթին, փուլաբաժանմանը, թվագրությանը, խեցեղենի տեխնոլոգիային նվիրված խնդիրներ՝ ինչպես ներկայիս, այնպես էլ Արևմտյան Հայաստանի տարածքում: Վրացի գործընկերները Հայաստանի հնագիտական խնդիրներին փորձեցին մոտենալ վրաց հնագիտության վերջին շրջանի ձեռքբերումների լույսի ներքո և հատկապես Թռեղքում կատարված պեղումների արդյունքների հիման վրա: Խոսք եղավ նաև ուրարտական և աքեմենյան մշակույթների դրսևորումների մասին ներկայիս Հայաստանի տարածքում: Լսվեցին հետևյալ զեկուցումները. «Հայաստանի կուր-արաքսյան մշակույթի փուլաբաժանումը և բացարձակ թվագրությունը նոր տվյալների լույսի ներքո» (Ռ. Բաղալյան՝ *Հայաստան*), *«Կարազ հույուկի (Էրզրում) խեցեղենը»* (Մ. Ըշրկլը՝ *Թուրքիա*), *«Զողազի վաղբրոնզիդարյան դամբարանները»* (Գ. Արեշյան և Հ. Սիմոնյան՝ *Հայաստան, ԱՄՆ*), *«Շենգավթի 2009 թ. պեղումների նախնական արդյունքները»* (Հ. Սիմոնյան, Մ. Ռոթման և Դ. Ռահիմի՝ *Հայաստան, ԱՄՆ*), *«Կուր-արաքսյան և նրանից ածանցված խեցեղենի տեխնոլոգիայի համեմատությունը»* (Լ. Գրինբերգ և Մ. Իզերլից՝ *Իսրայել*), *«Մեծ Մեպասարի վաղբրոնզիդարյան սրբարանը»* (Լ. Եգանյան՝ *Հայաստան*), *«Ագարակի կուր-արաքսյան մշակույթի բնակելի համալիրը»* (Գ. Թումանյան՝ *Հայաստան*), *«Նոր տվյալներ Թռեղքյան մշակույթի բացարձակ թվագրության վերաբերյալ»* (Կ. Փիցխելաուրի և Ռ. Կիլաձե՝ *Վրաստան*), *«Նոր հնագիտական ուսումնասիրություններ Թռեղքում»* (Գ. Նարիմանիշվիլի՝ *Վրաստան*), *«Աղավնատան դամբարանադաշտի պեղումների հիմնական արդյունքները և ժամանակագրությունը»* (Լ. Պետրոսյան և Ֆ. Մուրադյան՝ *Հայաստան*), *«Նոր մեթոդաբանական և տեխնոլոգիական ձեռքբերումներ ուշբրոնզիդարյան բնակելի համալիրների ուսումնասիրության բնագավառում. Ծաղկահովտի հարթավայր»* (Ի. Լինդզեյ՝ *ԱՄՆ*), *«Քանագեղի դամբարանադաշտի պեղումները (1999–2004 թթ.)»* (Ա. Փիլիպոսյան և Ռ. Մկրտչյան՝ *Հայաստան*), *«Երեք արծաթե եղջերագավաթներ Էրեբունիից. նոր տվյալներ Աքեմենյան շրջանի հայկական մետաղագործության վերաբերյալ»* (Դ. Ստրոնախ՝ *ԱՄՆ*), *«Արամուսի երկաթիդարյան ամրոցը. հնագիտական տվյալներ արևելյան և հյուսիսային ամրոցներից»* (Վ. Կունտներ, Ս. Հայնշ և Հ. Ավետիսյան՝ *Հայաստան, Ավստրիա*), *«Էրեբունիի Խալդիի տաճարի սահմանը. նախնական դիտարկումներ»* (Ս. Դեշամպ, Ֆ. Ֆիշե դը Կլերֆոնտեն, Ջ. Տրաինա, Վ. Մուտարելի և Գ. Դավթյան՝ *Հայաստան, Ֆրանսիա, Իտալիա*), *«Պարը և երաժշտությունը Ուրարտուում»* (Ու. Զայդլ՝ *Գերմանիա*), *«Ուրարտական և աքեմենյան մշակութային տարրերի դրսևորումները Լոռի Բերդի դամբարանային նյութերում»* (Ս. Դևեջյան՝ *Հայաստան*)*:*

Վերջին երրորդ օրը (սեպտեմբեր 17) նվիրված էր հելլենիստական և միջնադարյան Հայաստանի հնագիտության խնդիրներին: Ներկայացվեցին վերջին շրջանում իրականացված այնպիսի հուշարձանների պեղումների արդյունքնե-

ը, ինչպիսիք են՝ Բենիամինը, Երվանդաշատը, Արցախի Տիգրանակերտը, Արտաշատը, Հողմիկը, Անին: Ներկայիս Հայաստանի հելլենիստական բնակավայրերը դիտարկվեցին Պարսկահայքի համանման բնակավայրերի համատեքստում: Ուշագրավ էին աքեմենյան հուշարձանների՝ Բիսիթունի, եգիպտական Ջրանցքի կոթողի, Շոշի Դարեհի արձանի, Նաքշ-ի Ռուստեմի և Պերսեպոլիսի արքայական դամբարանների բարձրաքանդակների վրա պատկերված հայերի պատկերագրական առանձնահատկությունների, հայկական զգեստի, ընդհանրապես աքեմենյան միջավայրում հայերի դերի ուսումնասիրությանը նվիրված, ինչպես նաև մոնղոլական նորահայտ դամբարանի և հայոց եկեղեցու թեմերի վերաբերյալ վիմագրական վկայությունների մասին հաղորդումները: Ներկայացվեցին հետևյալ զեկուցումները. «Աքեմենյան հուշարձանների վրա պատկերված հայերը» (Մ. Ռոաֆ՝ *Գերմանիա*), *«Բենիամին. նոր տվյալներ պալատների և աքեմենյան կենսակերպի վերաբերյալ»* (Ֆ. Տեր-Մարտիրոսով, Ս. Դեշամպ, Ֆ. Ֆիշե դը Կլերֆոնտեն և Ե. Մուտարելի՝ *Հայաստան, Ֆրանսիա, Իտալիա*), *«Երվանդաշատի պեղումները (2005–2008 թթ.)»* (Ֆ. Տեր-Մարտիրոսով՝ *Հայաստան*), *«Հայաստանի և հյուսիսարևմտյան Իրանի հին հայկական բնակավայրերը. հելլենիստական շրջան»* (Ստ. Կրոլ՝ *Գերմանիա*), *«Արցախի Տիգրանակերտի հայտնաբերումը և հնագիտական ուսումնասիրությունների առաջին արդյունքները (2005–2009 թթ.)»* (Հ. Պետրոսյան, Լ. Կիրակոսյան, Վ. Սաֆարյան, Ա. Ժամկոչյան, Ռ. Վարդանյան, Ի. Կարապետյան և Տ. Վարդանեսովա՝ *Հայաստան, Արցախ*), *«Արտաշատի պեղումների արդյունքները (2003–2009 թթ.)»* (Ժ. Խաչատրյան՝ *Հայաստան*), *«Հողմիկի հեթանոսական տաճարի ուսումնասիրման խնդիրները և արդյունքները (2006–2008 թթ.)»* (Հ. Հակոբյան՝ *Հայաստան*), *«Վիմագրական վկայություններ հայոց եկեղեցու թեմերի վերաբերյալ»* (Գ. Սարգսյան՝ *Հայաստան*), *«Մոնղոլական նորահայտ դամբարան Հայաստանում»* (Հ. Մելքոնյան և Դ. Միրիջանյան՝ *Հայաստան*), *«Անիի արվարձանների քարանձավների պեղումները»* (Հ. Խաչատրյան՝ *Հայաստան*):*

Գիտաժողովի ընթացքում շրջանառվեցին մեծ քանակության նորահայտ տվյալներ և նյութեր Հայաստանի ու հարակից երկրների նյութական մշակույթի վերաբերյալ: Կարևոր է, որ Հայկական լեռնաշխարհի հնագույն և հին մշակույթին վերաբերող իրողությունները ներկայացվեցին մեկ ամբողջական համատեքստում: Արտասահմանցի հնագետներին ներկայացվեցին նաև հայ հնագետների ձեռքբերումներն Արցախում: Զեկուցումներից բացի կազմակերպվեցին այցելություններ հնագիտական տարբեր հուշարձաններ և թանգարաններ:

Գիտաժողովը կարևոր էր նաև այն իմաստով, որ առաջին անգամ բազմաթիվ հայ ու արտասահմանցի մասնագետներ հանդիպեցին միմյանց, և հնարավորություն ընձեռվեց ուղղակի երկխոսության համար: Գիտաժողովի նյութերը պատրաստվում են հրատարակության հայերեն և անգլերեն:

ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ